չեալ առ ինքն զնոր Քաղաքապետն՝ պատուիրեաց նմա չը-
լինել ունկնդիր բանից, որք մատուցանեն զպարտամուր-
հակս, եւ ցՀայս ասէ, գրեցից 'ի Դուռն թէ Դատաւորն
յետ վճռոյ ժողովոյն ոչ կամեցաւ տալ զիլամն։ Եւ յաւուր
միւսմ չոքան Կարապետ Եպիսկոպոս եւ Յովհաննէս վար-
դապետ 'ի տուն Նախիպին, ուր էր Դատաւորն, զի միջնոր-
դութեամբ նորին ողոքեսցեն զնա տալ զիլամն, և սկիզբն
արարեալ բանից, խօսէին. արտմտեալ նորա սկսաւ նախա-
տել զնոսա անպատեհ բանիւք, եւ ընթացեալ արտաքս
բոկոտն երթալ փակել զդատարանն, զի ոչ երկնչիմ ասէր
'ի Բդեշխէն եւ ոչ ունկնդիր լինիմ բանից նորա։ Սակայն
այլազգիք ողոքանօք դարձուցին զնա յետս, եւ վարդա-
պետքն մեկնեցան անտի։

Եւ 'ի սոյն աւուրս, մինչդեռ Բդեշխն յերուսաղէմ էր,
եհաս անդ և Լիւսդրացին Յակոբ, և մատուցեալ գիր ա-
ղաչանաց խնդրէր 'ի Հայոց զառնելիս իւր և զերից ամաց
տոկոսիս նորին, և ապա յաւելոյր ասել, թէ անիրաւու-
թեամբ խնդրեն դոքա զիլամ վասն պարտուց իւրեանց,
զի 'ի վանս դոցա ձեռամբ իմով եղեալ և կնքեալ եմ զինչս
աւելի քան զ10,000 քսակի, և զայլ բաջաղանս։ Եւ կոչել
Բդեշխն և զՅովհաննէս վարդապետ, կոչեաց և զՅակոբ,
և իրրեւ եհարց թէ զինչ խնդրես, յայտ արար թէ 50,000
դահեկան զառնելիս իւր՝ առաջի եղեալ գրեանս 5, որք
էին անդորրագիրք Պօղոս և Գաբրիէլ Պատրիարքաց. զայն
տեսեալ Յովհաննու կշտամբեաց զնա, թէ այս ատեան
Վէզիրի է և ոչ խանութի փէրէզակի թոթափել զանպէտ
թղթեանս, և 'ի սաստել Բդեշխին՝ ժողովեալ զայնս եհան
զմուրհակն բազմակնիք. և 'ի բազմանալ բանից յերկուց
կողմանց, եհան զնա Բդեշխն յատենէ իւրմէ՝ պատուիրեալ
նմա սպասել ժամանակի բաժնի, և ապա ասէ ցՅովհաննէս
վարդապետ, թէ Յոյնք վասն այսպիսեաց առին հրովար-
տակ արքունուստ, եթէ ոք թողեալ զհայրենի կրօնս եւ
յարեսցի յայլ, ինքն գլխատի եւ ինչք նորա յարքունիս
դրաւին։

Եւ յետ այնորիկ առեալ Բդեշխին ընդ իւր զՅովհան-
նէս վարտապետ դարձ արար 'ի Դամասկոս (յ31 Դեկտեմ-
բերի)։ Զկնի մեկնելոյ Բդեշխին զհետ եղեն Խորհրդա-